ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«10» ..... 05 ..... 2021 թ. N ՀՊ/1/11743-2021

«ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ (ՀՎՀՀ 20017691)
տնօրեն Ն. Շախնազարյանին
(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճ. 10/7,
էլ. հասցե՝ nshakhnazaryan0@gmail.com)

Հարգելի՛ պարոն Շախնազարյան,

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021 թվականի **ապրիլի 13-ին** կնքված **N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/17Ծ** պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցման համար Ձեր կազմակերպությունը ստանձնել է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, Պայմանագրով սահմանված թվային տախոգրաֆի քարտերի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորվածություն:

Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծը ծանուցվել է 16.04.2021թ.՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո: Սակայն, համաձյանագրի ստորագրված տարբերակը Ձեր կողմից ներկայացվել է Պայմանագրի 7.13 կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Պայմանագիրը միակողմանի լուծվում է:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները՝ (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.2 և Հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվի «Ինեկոբանկ» ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները (6

500 000 ՀՀ դրամ և 650 000 ՀՀ դրամ) ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետական N 90000800664 և N 900005000758 հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

«ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ-ին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝ Հ. Բատիկյան

5/10/2021

X

ՀԱՄԼԵՏ ԲԱՏԻԿՅԱՆ

Signed by: BATIKYAN HAMLET 1905880359

Կատարող՝ Սիրուշ Նազարյան
Գնումների համակարգման բաժին
010 511-329
gnumner@mta.gov.am